# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-2

ք. Երևան 21 հունիս 2018թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և ԱՁ Արման Ասմանգուլյանը՝ ի դեմս Արման Ասմանգուլյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 111 900 (մեկ հարյուր տասնմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | Արման Ասմանգուլյան ԱՁ |
| ք. Երևան, Մ. Ադամյան 1 | Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն |
| ՀՎՀՀ՝ 02629081 | «Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ |
| Հ/Հ 900011018539 | Հ/Հ 2474600042830000 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | ՀՎՀՀ 30923517 |
| գործառնական վարչություն | Տնօրեն՝ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի | |
| Ժամանակավոր պաշտոնակատար՝ | |
| ---------- Կ. Գասպարյան | ---------- Ա. Ասմանգուլյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 21 » հունիս 2018թ. կնքված*
*«ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-2» ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 2 | 79821170/511 | Կազմը կաշվեպատ, հաստ կարտոնե չճկվող, չափսերը 30×21սմ., թերթերի քանակը առնվազն 100 թերթ, սոսնձակար, էջերինմուշը կցվում է: Քանակը՝ 8 հատ: | դրամ | 24000 | 24000 | 1 | ՀՀ ֆինանսների նախարարություն Մելիք-Ադամյան 1 | Մատակարարումը իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում: |
| 3 | 79821170/512 | Կազմը կաշվեպատ, հաստ կարտոնե չճկվող, չափսերը 30×21սմ., թերթերի քանակը առնվազն 100 թերթ, սոսնձակար, էջերի նմուշը կցվում է: Քանակը՝ 1 հատ: | դրամ | 3600 | 3600 | 1 | ՀՀ ֆինանսների նախարարություն Մելիք-Ադամյան 1 | Մատակարարումը իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | հիման վրա՝ համաձայն ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում: : |
| 4 | 79821170/513 | Կազմը կաշվեպատ, հաստ կարտոնե չճկվող, չափսերը 30×21սմ., թերթերի քանակը առնվազն 100 թերթ, սոսնձակար, էջերի նմուշը կցվում է: Քանակը՝ 1 հատ: | դրամ | 3600 | 3600 | 1 | << ֆինանսների նախարարություն Մելիք-Ադամյան 1 | Մատակարարումը իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հիման վրա՝ համաձայն ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում: : |
| 8 | 79821170/517 | A3 ֆորմատի, երկկողմանի տպագրված, նմուշը կցվում է: Քանակը՝ 1000 հատ: | դրամ | 24000 | 24000 | 1 | << ֆինանսների նախարարություն Մելիք-Ադամյան 1 | Մատակարարումը իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հիման վրա՝ համաձայն ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ընթացքում: : |
| 10 | 79821170/519 | Չափսերը 14×10սմ, թուղթը առնվազն 300գ, ամուր, սպիտակավուն, նմուշը կցվում է: Քանակը՝ 250 հատ: | դրամ | 11700 | 11700 | 1 | << ֆինանսների նախարարություն Մելիք-Ադամյան 1 | Մատակարարումը իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում: : |
| 11 | 79821170/520 | A4 ֆորմատի, երկկողմանի տպագրված թուղթը առնվազն 300գ, ամուր, սպիտակավուն, նմուշը կցվում է: Քանակը՝ 250 հատ: | դրամ | 45000 | 45000 | 1 | << ֆինանսների նախարարություն Մելիք-Ադամյան 1 | Մատակարարումը իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում: |

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Տեղափոխումն ու բեռնաթափումը պետք է իրականացնի մատակարարը:*
****Գնման գործընթացը իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար՝

---------- Կ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Արման Ասմանգուլյան ԱՁ
Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն
«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 2474600042830000
ՀՎՀՀ 30923517
Տնօրեն՝

---------- Ա. Ասմանգուլյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*« 21 » հունիս 2018թ. կնքված*
*«ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-2» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«21 » հունիս 2018թ. կնքված*
*«ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-2» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

*Հավելված 8*
*«ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «_____»_____ 20 թ.**

Արման Ասմանգուլյան ԱՁ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Արման Ասմանգուլյանի AH0528497, 09.02.2008,
Ընկերության անվանում Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները
009>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *«ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3»* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/____/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Արման Ասմանգուլյան ԱՁ

ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն

«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ

Հ/Հ 2474600042830000

ՀՎՀՀ 30923517

Արման Ասմանգուլյան

Կ.Տ

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1] |
| 2. Թիվ | |
| 3. | Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն) ՝ ԱՁ Արման Ասմանգուլյան | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝2474600042830000 | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝30923517 | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը ՝ ՀՀ Ֆինասների նախարարություն | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02629081 | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝11190 տասնմեկ հազար հարյուր իննսուն | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ AMD հայկական դրամ | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ | |
| 19. Վճարման պայմանները՝ | <ակցեպտավորված վճարում> |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>22.բ. Կ.S. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>21.բ. Կ.S. |

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

| | |
|---|---|
| | |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

ՁԵՎ N27

(գաղտնիության դրոշմագիրը)

# ՄԱՏՅԱՆ

## ելից փաստաթղթերի հաշվառման

| NN, ը/կ գաղտնիության դրոշմագիրը | Փաստաթղթերի ստորագրման ամսաթիվը | Պատրաստի փաստաթղթի համարը, հատուկ նոթատետրի, տետրի համարը | Փաստաթղթի կատարողը (ստորաբաժանումը, ազգանունը) | Տեսակը և համառոտ բովանդակությունը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | |
| | | | | |

(շարունակություն)

| Փաստաթղթերն առաքված են | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | թերթերի թիվը | | | |
| օրինակների թիվը | օրինակ-ների համարները | հիմնական փաստաթղթի | հավելվածի | ում և որտեղ | ստորագրություն՝ ստանալու համար և ամսաթիվը, ցուցակի (ռեեստր) կամ ցրիչ գրքի հերթական համարը |
| 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | | | | | |
| | | | | | |

(շարունակություն)

| Նշում ոչնչացման մասին, ակտի համարը և ամսաթիվը | Փաստաթղթերի և ֆայլի գտնվելու տեղը | | | Փաստաթղթերի առկայությունն ստուգելու ամսաթիվը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | գործի և հատորի համարը | թերթի համարները | Ֆայլի գտնվելու տեղը | | |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| | | | | | |
| | | | | | |

**Ձև N6**

ԳԱՂՏՆԻ

# ՄԱՏՅԱՆ

Առաջին և երկրորդ ձևերի

թույլտվության քարտերի հաշվառման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

| N N | Ազգանունը,անունը, հայրանունը,պաշտոնը | Միջնորդագրի և թույլտվության համար անձի համաձայնության ամսաթիվը | Թույլտվությունը համաձայնեցնելու մասին ելից նամակի համարը և ամսաթիվը | Թույլտվությունը համաձայնեցնելո վերաբերյալ պատասխանի համարը և ամսաթի |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

| Աշխատանքային պայմանագրի կնքման ամսաթիվը | Նշումներ թույլտվության քարտի շարժի վերաբերյալ | | | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| | ում է առաքված | ելից փաստաթղթի համարը և ամսաթիվը | Ոչնչացման մասին ակտի համարը և ամսաթիվը | |
| 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

ՁԵ N12

ԳԱՂՏՆԻ

# ՄԱՏՅԱՆ

Երրորդ ձևի թույլտվության

քարտերի հաշվառման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

| N N | Ազգանունը,անունը, հայրանունը,պաշտոնը | Միջնորդագրի և թույլտվության ձևակերպման համար անձի համաձայնության ամսաթիվը | Թույլտվությունը կազմակերպության ղեկավարի կողմից ստորագրման ամսաթիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

| Աշխատանքային պայմանագրի կնքման ամսաթիվը | Նշումներ թույլտվության քարտի շարժի վերաբերյալ | | | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| | ում է առաքված | ելից փաստաթղթի համարը և ամսաթիվը | Ոչնչացման մասին ակտի համարը և ամսաթիվը | |
| 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

**ՁԵՎ N7**

| |
|---|
| լուսանկարի տեղը |

# ՀԱՐՑԱԹԵՐԹ

| ՀԱՐՑԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ |
|---|---|
| 1. Ազգանուն, անուն, հայրանուն | |
| 2. Եթե փոխելե քազգանունը, անունը կամ հայրանունը, նշեք՝ երբ, որտեղ և ինչ պատճառով | |
| 3. Ծննդյան տարեթիվը | |
| 4. Ազգությունը | |
| 5. Սոցիալական ծագումը | |
| 6. Քաղաքացիությունը (երկքաղաքացիությունը, այլ թվում նախկինում ունեցած) | |
| 7. Կրթությունը և մասնագիտությունը, երբ և որ ուսումնական հաստատություններ ավարտել | |
| 8. Գիտական աստիճանը, գիտական կոչումը | |
| 9. Ինչպիսի գիտական աշխատություններ և գյուտե՛ ր՛ ունեք | |
| 10. Ինչ օտար լեզուների եք տիրապետում (կարդում և թարգմանում եք բառարանով, կարդում և կարող եք բացատրվել, տիրապետում եք ազատ) | |
| 11. Դատվածության առկայությունը, այդ թվում հանված և մարված, ինչպես նաև քրեական գործի շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավված լինելը | |

12. Ձեր մերձավոր հարազատները (կինը, ամուսինը, հայրը, մայրը, չափահաս եղբայրները, քույրերը և երեխաները: Նշվում է նաև մոր և կնոջ օրիորդական ազգանունը)

| Ազգակցության աստիճանը | Ազգանունը, անունը, հայրանունը | Ծննդյան տարեթիվը, ամսաթիվը և ծննդավայրը | Աշխատավայրը, պաշտոնը | Բոակավայրի հասցեն |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

13.Կատարած աշխատանքն աշխատանքային գործունեության սկզբից (ներառյալ ուսումնասիրությունը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, զինվորական ծառայությունը և աշխատանքը համատեղությամբ)

| Ամիսը և տարին | | Պաշտոնը, նշելով կազմակերպությունը,նախարարությունը, գերատեսչությունը | Կազմակերպության, գտնվելու վայրը, հասցեն |
|---|---|---|---|
| ընդունվելու | հեռանալու | | |
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |

14. Մասնակցությունը հանրապետական, քաղաքային ընտրական մարմիններում

| Ընտրական մարմնի գտնվելու վայրը | Ընտրական մարմնի անվանումը | Որպես ինչ եք ընտրել | Տարեթիվը | |
|---|---|---|---|---|
| | | | ընտրության | Դուրս մնալու |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

15.Կառավարական ինչպիսի պարգևներ ունեք _____

_____

(երբ և ինչով եք պարգևատրվել)

_____

16.Առնչությունը զինապարտությանը և կոչումը _____

_____

Կազմը _____ Զորքի տեսակը _____
(հրամանատարական, տեխնիկական և այլն)

17.Տնային հասցեն _____

_____հեռ. _____

18.Անձնագիրը _____

(սերիան, համարը, երբ և ումկողմից է տրված)

_____

«____» _____ _____թ.

_____
(ստորագրություն)

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

հարցաթերթը լրացնելու և ինքնակենսագրությունը
գրելու կարգի մասին

1. Հարցաթերթը լրացնելիս առաջադրված բոլոր հարցերին տրվում են ընթեռնելի ամբողջական և մանրամասն պատասխաններ:
2. 12-րդ կետում նշվում են նաև մոր և կնոջ օրիորդական ազգանունները, քույրերի ազգանունները նախքան ամուսնանալը և ամուսնությունից հետո, անհայտ կորած, զոհված և մահացած (չափահաս) մերձավոր հարազատները:
3. 12-րդ և 13-րդ կետերում ձեռնարկությունների անվանումները նշվում են առանց կրճատումների: Աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն աշխատանքային գրքույկի գրանցումներին:
4. Հարցաթերթի վերջում, ձևակերպվողի ստորագրությունից հետո, կադրային ծառայության աշխատողը ձեռագրով կատարում է հետևյալ լրանշումը. «Լուսանկարը ու աշխատանքային գործունեության և ուսման վերաբերյալ տվյալները համապատասխանում են _____ անձը հաստատող փաստաթղթերին», և հաստատվում է ստորագրությամբ ու կնիքով:
5. Ինքնակենսագրությունը գրվում է ցանկացած ձևով, անձամբ, հստակ, առանց ջնջումների և ուղղումների՝ առավել մանրամասն լուսաբանելով հարցաթերթում նշված հարցերը և այլ կենսագրական տեղեկություններ:
6. Քաղաքացիության մասին տողում նշվում է անձի երբևիցէ ունեցած քաղաքացիությունները, երկքաղաքացիությունը, այդ թվում ներկա պահին,քաղաքացիություն (երկքաղաքացիություն ) ունենալու և դրանից հրաժարվելու ժամանակահատվածները:
7. Դատվածության մասին տողում նշվում է անձի քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելու հանգամանքը, որով նախատեսված հանցանքի կատարման համար անձը մեղադրվել է, դատվածության առկայությունը, այդ թվում հանված և մարված, դրանց ժամկետները

| Ծանոթություն | Անուն, ազգանուն, ստորագրություն |
|---|---|
| Տեղեկացված եմ, որ հետագայում կազմակերպությունում աշխատելու ընթացքում անձնական տվյալների, այդ թվում քաղաքացիության փոփոխության, ինչպես նաև դատվածություն ունենալու դեպքում պարտավոր եմ դրա մասին տեղեկացնել ԳՌԱՍ | |
| Աշխատանքից ազատվելու դեպքում պարտավորվում եմ կատարել վերջնահաշվարկ ԳՌԱՍ-ի հետ | |

կետեր 54, 56, 57, 69

ՁևN4

# Հաշվառման քարտ

առաջին և երկրորդ ձևերի
թույլտվություն ունեցող անձանց

_____ N _____ «_____» _____թ.

Ազգանունը _____

Անունը _____

Հայրանունը _____

Ծննդյան տարեթիվը և ամսաթիվը _____

Ծննդավայրը _____

Հասցեն _____

Աշխատավայրը և պաշտոնը _____

_____

Պարզաբանում՝ Քարտը պատրաստվում է ամուր, բայց ոչ հաստ թղթից, հորիզոնական՝ 140մմ, ուղղաձիգ՝ 100մմ չափերով:

Հաշվառման քարտի մեջ նշել գրանցման և բնակության հասցեները:

ՁևN3

Գաղտնի
(ըստ լրացման)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ N _____

(հաշվառման համարն ըստ մատյանի (ձև 6)

1. _____
(ազգանունը, անունը, հայրանունը)

2. _____

_____
(ծննդյան տարեթիվը, ամսաթիվը, վայրը)

_____

3. Կրթությունը _____
(ուսումնական հաստատության անվանումը)

_____

Հասցեն _____

4. Հատուկ նշումներ _____
(ազգանունի, հասցեի փոփոխման)

_____

_____

Լուսանկարի տեղը

Կ.Տ.

_____ լուսանկարը և
(ազգանուն)
քարտում նշված տվյալները հավաստիացվում են

ԳՌԱՍ-ի աշխատող

(ստորագրություն, ազգանուն)

«_____» _____ _____ թ.

6. _____ձևի թույլտվությունը
(ձևի համարը համաձայնեցված է)

N _____

«_____» _____ _____ թ.

_____
(ստորագրությունը, ազգանունը)

Կ.Տ.

7. Կարգադրության թույլտվության մասին

1. Թույլատրել _____
(ազգանունը, անունը, հայրանունը)

առնչվել տեղեկություններին ըստ _____ ձևի:

(ձևի համարը)

_____
(կազմակերպության ղեկավարի ստորագրությունը, ազգանունը)

Կ.Տ. «_____» _____ _____թ.

2. _____

_____
(ծալատեղ)

8. Աշխատանքային գործունեության թույլտվության ձևակերպման պահից

| N/N ը/կ | Կազմակերպության անվանումը | Զբաղեցրած պաշտոնը (բաժին, արտադրամաս) | Նշանակման հրամանի համարը և ամսաթիվը | Ազատման հրամանի համարը և ամսաթիվը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |

կետեր 46, 52, 53, 57, 58, 59, 61, 62, 64, 65, 74, 75,76, 77

9. Տեղեկություններ ռեժիմի խախտման և ձեռնարկված միջոցների մասին _____

_____

_____

10. Մերձավոր հարազատները (հայր, մայր, կին, ամուսին, եղբայրներ, քույրեր և երեխաներ)

| Ազգակցության աստիճանը | Ազգանունը, անունը, հայրանունը | Ծննդյան տարեթիվը և ամսաթիվ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 21.06.2018թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-2» ծածկագրով տպագրական աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «10» հուլիս 2018թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և Ա/Ձ Արման Ասմանգուլյանը՝ ի դեմս Արման Ասմանգուլյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 21.06.2018թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-2» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 և 7.13 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված աշխատանքի կատարման նպատակով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

### 2. Այլ պայմաններ

2.1. 21.06.2018թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-2» ծածկագրով աշխատանքի կատարման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | Արման Ասմանգուլյան Ա/Ձ |
| ք. Երևան, Մ. Ադամյան 1 | Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն |
| ՀՎՀՀ՝ 02629081 | «Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ |
| Հ/Հ 900011018539 | Հ/Հ 2474600042830000 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | ՀՎՀՀ 30923517 |
| գործառնական վարչություն | |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի | |
| պաշտոնակատար՝ | |
| ---------- Վ. Հարությունյան | ---------- Ա. Ասմանգուլյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
21.06.2018թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-18/3-2» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«10» հուլիս 2018թ կնքված համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 79821170/511 | Գիրք-մատյան Ելից գաղտնի փաստաթղթերի հաշվառման Ձև 27 | | | | | | | 12000 | 12000 | 12000 | 24000 | 24000 | 24000 | 24000 |
| 3 | 79821170/512 | Գիրք-մատյան Առաջին և երկրորդ ձևերի թույլտվության քարտերի հաշվառման Ձև 6 | | | | | | | 1800 | 1800 | 1800 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 4 | 79821170/513 | Գիրք-մատյան Երրորդ ձևի թույլտվության քարտերի հաշվառման Ձև 12 | | | | | | | 1800 | 1800 | 1800 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 8 | 79821170/517 | Բլանկ Ձև 7 գաղտնի | | | | | | | 12000 | 12000 | 12000 | 24000 | 24000 | 24000 | 24000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 79821170/519 | Բլանկ Ձև 4 գաղտնի | | | | | | | 5850 | 5850 | 5850 | 11700 | 11700 | 11700 | 11700 |
| 11 | 79821170/520 | Բլանկ Ձև 3 գաղտնի | | | | | | | 22500 | 22500 | 22500 | 45000 | 45000 | 45000 | 45000 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար՝

---------- Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Արման Ասմանգուլյան ԱՁ
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն
«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 2474600042830000
ՀՎՀՀ 30923517

---------- Ա. Ասմանգուլյան
/ստորագրություն/
Կ.Տ